ԻՆՔՆԱՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Դատական ակտերի տեքստերի ընթեռնելի, պարզ և հստակ լինելու պահանջներն ուղղակիորեն կապված են այնպիսի հիմնարար իրավունքների իրացման հետ, ինչպիսին են՝

ա/ հրապարակային դատաքննության իրավունքը,

բ/ արդարադատության մատչելիության իրավունքը,

գ/դատական ակտի պատճառաբանվածությունը և դատարանի անաչառությունը,

դ/ բոլոր պատասխանները ճիշտ են։

Ճիշտ պատասխան՝ <<դ>>

Նման պատասխանը ներկայացված է դասի մեջ։

2. Որ շարադրանքն է ճիշտ՝ իրավական հասկացությունների և օրենքի կանոնների լեզվական կիրառման տեսանկյունից՝

ա/ Հանցագործության համար մեղադրվող անձին թույլատրվում է պաշտպանվել **(pro se)**, ինչպես նաև պաշտպանվել փաստաբանի միջոցով՝ նրա հետ պայմանագիր կնքելու և վճարելու եղանակով, ինչպես նաև օգտվել անվճար իրավաբանական օգնությունից հանրային պաշտպանության շրջանակներում։

բ/ Դատարանները պետք է խուսափեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումները **չափազանց ձևական (excessive formalism**) և մեխանիկական մեկնաբանման ենթարկելուց՝ որպեսզի նվազեցվի գործի ելքի վրա ազդող դատական սխալ թույլ տալու հավանականությունը։

գ/ Եթե մեղսունակությունը որոշվում է **ռետրոսպեկտիվ կարգով**, ապա անձի գործունակությունը կապված է անձի քննադատական ունակությունների հետ։

դ/ Նման եզրահանգմանը Դատարանը հանգել է **expressio unius** հանրաճանաչ կանոնի կիրառման արդյունքում, ուստի բողոքաբերի պնդումներն անհիմն են։

Ճիշտ պատասխան՝ <<բ>>

Նման պատասխանը բխում է ԵԴԽԽ թիվ 7 (2005) կարծիքի 59-րդ կետից և ներկայացված է դասի մեջ։

3. Դատական ակտերում կրավորական և ներգործական սեռի նախադասությունների ճիշտ կազմման և կիրառման տեսանկյունից ստորև նշված ո՞ր տարբերակն է ճիշտ՝

ա/ Դատարանն արձանագրում է, որ վերոգրյալ պատճառաբանությունների լույսի ներքո բողոքը ենթակա է մերժման դատարանի կողմից։

բ/ Սույն որոշման դեմ ՀՀ վճռաբեկ դատարան բողոք կարող է ներկայացնել դատավարության յուրաքանչյուր մասնակից՝ այն ստանալու օրվանից հետո 15-օրյա ժամկետում։

գ/ Գործը միանձնյա քննող դատավորը նախագահում է դատական նիստը։

դ/ Ի շահ պաշտպանյալի ներկայացված բողոքը պաշտպանի կողմից հետ վերցվելու իրավունք առկա չէ։

Ճիշտ պատասխան՝ <<գ>>

Նման պատասխանը բխում է նրանից, որ կրավորական նախադասությունները պետք է կիրառվեն միայն այն դեպքում, երբ կարևոր է ընդգծել գործողությունը։ Եթե կարևոր է ընդգծել գործողությունը կատարողին, ապա պետք է կիրառել ներգործական սեռի նախադասությունները։

Նման պատասխանը ներկայացված է դասի մեջ։

4. Նշված տարբերակներից որն է ճիշտ՝

ա/ Դատական ակտերի կազմման ժամանակ առաջնային նշանակություն ունի տեքստի ծավալը, հետևաբար պարբերությունը պետք է լինի չափազանց երկար, քանի որ այն ազդում է ասվածը հասկանալու ունակության վրա:

բ/ Դատական ակտում որքան երկար է նախադասությունը, այնքան ավելի ընկալելի է դրա էությունը:

գ/ Պարբերության առաջին նախադասությունը կարող է տրամաբանական կապ չունենալ դրանում շարադրված մյուս նախադասությունների հետ, քանի որ առաջնային է նախևառաջ դատական ակտի ծավալն ապահովելը:

դ/ Պարբերությունները պետք է ունենան 5-8 տող, քանի որ այն թույլ է տալիս ընթերցողին ավելի լավ հիշել գաղափարները, քան եթե դա չափազանց երկար պարբերություն լիներ:

Ճիշտ պատասխան՝ <<դ>>

Նման պատասխանը ներկայացված է դասի մեջ:

5. Նշված տարբերակներից որն է ճիշտ՝

ա/ Մեկ գլխավոր ու մի քանի երկրորդական նախադասություններից բաղկացած նույն նախադասությունը, որն արտահայտում է 4-ից ավելի միտք, տեքստը դարձնում է ավելի դիպուկ և տրամաբանական:

բ/ Դատական տեքստում կարևոր է միայն համասեռ միտքը, հետևաբար մեկ նախադասությունը կարող է կազմել մոտ կես էջ, ինչը տեքստը դարձնում է ավելի հետաքրքիր ընթերցանության համար:

գ/ Մեկ նախադասությունը պետք է մեկ միտք արտահայտի: Մեկ գլխավոր ու մի քանի երկրորդական նախադասություններից բաղկացած երկար նախադասությունները ճիշտ կլինի բաժանել մի քանի պարզ նախադասությունների:

դ/ Որքան ձգձգված, երկար և խրթին նախադասություններից կազմված լինի տեքստը և որքան ունենա բարդ կառուցվածք, այնքան այն ավելի տպավորիչ և ազդեցիկ կլինի ընթերցողի համար:

Ճիշտ պատասխան՝ <<գ>>

Նման պատասխանը բխում է նրանից, որ դատական ակտերը հիմնականում բաղկացած են բարդ ստորադասական նախադասություններից: Շաղկապներով և հարաբերյալ-հարաբերականներով կապված կառույցները ձևավորում են խոսքային կուռ միջավայր, ստեղծում են տրամաբանական ամուր կապ, ընդգծում են տեքստի պատճառահետևանքային կառուցվածքը: Սա պաշտոնական ոճի առաձնահատկությունն է:

Նման պատասխանը ներկայացված է դասի մեջ:

6. Նախադասության անդամների զուգաձևության համատեքստում, եթե անհրաժեշտ չէ հետևել որևէ տրամաբանական հաջորդականության, ապա ինչպես է խորհուրդ տրվում շարքի տարրերը դասավորել՝

ա/ ըստ ձևակերպման երկարության՝ աճման կարգով (կարճից դեպի երկար),

բ/ ըստ ձևակերպման երկարության՝ նվազման կարգով (երկարից դեպի կարճ),

գ/ ըստ ձևակերպման երկարության՝ մեկ նախադասության մեջ պետք է կառուցվեն միայն երկար ձևակերպված տարրերը, ապա հաջորդ նախադասության մեջ միայն կարճ ձևակեպված տարրերը,

դ/ ըստ ձևակերպման երկարության՝ մեկ նախադասության մեջ պետք է կառուցվեն միայն կարճ ձևակերպված տարրերը, ապա հաջորդ նախադասության մեջ միայն երկար ձևակեպված տարրերը,

Ճիշտ պատասխան՝ <<ա>>

Նման պատասխանը բխում է նրանից, որ ծավալուն զուգորդությունները տեքստում դասավորելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել դրանց հաջորդականությանը: Եթե անհրաժեշտ չէ հետևել որևէ տրամաբանական հաջորդականության, ապա խորհուրդ է տրվում շարքի տարրերը դասավորել ըստ ձևակերպման երկարության՝ աճման կարգով (կարճից դեպի երկար):

Նման պատասխանը ներկայացված է դասի մեջ:

7. Ստորև նշված ո՞ր շարադրանքն է ճիշտ՝

ա/ Դատական վարույթը դա դատարանի կողմից իր իրավասության սահմաններում իրականացվող ընթացակարգն է:

բ/ Դատարանը մերժեց հաշմանդամ Ա.Գրիգորյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը:

գ/ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նպատակն անձի իրավունքների և ազատությունների երաշխավորման վրա հիմնված՝ ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթի իրականացման արդյունավետ կարգի սահմանումն է:

դ/ Դատական նիստի ընթացքում Դատարանն արձանագրեց, որ հայցվորի ներկայացրած փաստերն ակնհայտ անհիմն են:

Ճիշտ պատասխան՝ <<գ>>

Նման պատասխանը բխում է նրանից, որ դատական ակտերում հաճախ օգտագործվում են բառեր ու արտահայտություններ, որոնք տեքստի բովանդակությանը էական իմաստ չեն հաղորդում, անտեղի ծանրացնում են տեքստը, զրկում հստակությունից, պարզությունից, տեքստը դարձնում են դժվար ընկալվող, ինչն անընդունելի է:

Նման պատասխանը ներկայացված է դասի մեջ:

8. Ստորև նշված տարբերակներից որն է ճիշտ՝

ա/ Ավելի լավ է միտքը հստակ ներկայացնել պարզ տրամաբանական փաստարկմամբ, քան տեքստը համեմել որակավորող և իմաստ ուժեղացնող ձևակերպումներով:

բ/ Մակաբույծ (պարազիտ) բառերը որևէ կերպ չեն ազդում բովանդակության վրա, ավելորդ են ու անհարկի ծանրացնում են տեքստը և եթե այդ բառերը տեքստից դուրս բերվեն, բովանդակությունը որևէ կերպ չի տուժի:

գ/ Դատական ակտեր կազմելիս պետք է զգույշ լինել, որ չօգտագործվեն այնպիսի բառեր, արտահայտություններ կամ մտքեր, որոնք խտրական են և կարող են հանգեցնել դատական ակտի անիրավաչափությանը, ինչպես նաև հարց բարձրանա դատավորի կանխակալության, արդյունքում՝ անաչառության բացակայության մասին:

դ/ Բոլոր պատասխանները ճիշտ են:

Ճիշտ պատասխան՝ <<դ>>

Նման պատասխանը բխում է նրանից, որ դատական ակտը պետք է արտահայտի չեզոք վերաբերմունք, որը ներկայացված է դասի մեջ:

9. Ստորև նշված տարբերակներից որն է ճիշտ՝

ա/ Հաշվի առնելով կանանց խոցելիությունը որոշ տեսակի իրավախախտումների գործերով, անհրաժեշտ է, որ դատարանները ցուցաբերեն գենդերազգայուն մոտեցում արդարադատություն իրականացնելիս:

բ/ Դատարանը կաշկանդված չէ անձի առողջական վիճակի վերաբերյալ հստակ պիտակավորում տալուց, քանի որ այն իրականացվում է դատարանի կողմից օրենքով սահմանված կարգով, ուստի բացառվում է խտրական մոտեցումը:

գ/ Անկախ նրանից, թե տվյալ բառը կամ բառակապակցությունը հանելու դեպքում տեքստը բովանդակային կորուստ ունենու՞մ է, թե ոչ, միևնույն է այն պետք է պահել տեքստում, առաջնորդվելով տեքստի ծավալը պահպանելու անհրաժեշտությամբ:

դ/ Ավելի լավ է տեքստը համեմել որակավորող և իմաստ ուժեղացնող ձևակերպումներով, ինչն ավելի հաճելի է դարձնում ընթերցանությունը, քան միտքը հստակ ներկայացնել պարզ տրամաբանական փաստարկմամբ:

Ճիշտ պատասխան՝ <<ա>>

Նման պատասխանը ներկայացված է դասի մեջ:

10. Դերբայական դարձվածների հաճախակի կիրառումը կամ կուտակումը դատական ակտերի մեջ հանգեցնում է՝

ա/ տեքստի օբյեկտիվության և հստակության,

բ/ տեքստի պարզության և մատչելիության,

գ/ տեքստի տրամաբանականության,

դ/ արհեստականության և անհստակության:

Ճիշտ պատասխան՝ <<դ>>

Նման պատասխանը ներկայացված է դասի մեջ: